


# ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՐՑ ԵՒ ՍՈՒՍԿԱՅԻԹԻ ԴԵՊՐԵՐԸ



«Մոսկուայի լուրեր» թերթը իր 17 Ապրիլի թիւով կը զբէր թէ դեռ վերջերս, անցեալ տարուան վերջաւորութեան, Ատրպէյճանի եւ Հայաստանի սահմանները ճշդուած են 975 քիլոմէթր երկայնքի վրայ, սահմանային փոխանակումով մը: Հայաստանի տրուած է 3243 հեկտար, որոնց 685ը՝ մշակելի հողեր, իսկ Ատրպէյճանին տրուած 1604 հեկտար, որոնց 128ը մշակելի:

Յօդուածը, որուն խորագիրն է «Սոււմլայիք, ամիս յետոյ», կարգ մը տեղեկութիւններ կուտայ քաղաքին ներկայ կեանքին մասին: Կը զբէ թէ պատերուն դեռ կայ սա կոչը:

«Քննութիւն մը կայ այն զանգուածային խառնակութեանց պարագաներուն մասին, որոնք տեղի ունեցան Փետրուար 27-29-ին: Կը խնդրենք այն բոլոր քաղաքացիներէն, որոնք ականատես եղած են ոմիրներու կամ տեղեակ են անոնց պարագաներէն, որ տեղեկացնեն մեզի...: Ստորագրուած՝ Խորհրդային Միութեան արդարութեան քննիչներու խումբ»:

Թերթին յատուկ թղթակիցը կը պատմէ, որ աւելի քան հարիւր հարցաքննիչ դատաւորներ համախմբուած են: Ամէնէն մեծ զբառնեակին մէջ, դատաւորները թողաձայնութիւն քարտէս մը պատրաստած են, տարբեր դոյներով մասնանշուած կէտերով, ըստ հոն կատարուածին՝ փոկրոմ, սպանութիւն, բռնարարում: Ցարդ, դատախազը 80 հոգի ձերբակալած է: Բոլորին համար, այդ երեք օրերը ցնցիչ եղած են: Քաղաքի առողջապահութեան պատասխանատուն կը պատմէ թերթին թղթակիցին. «Այդ դիչերը, դժուար հասայ հիւանդանոց: Բազմութիւնը շէր ձգեր որ անցնինք, կը կեցնէր մեզ, կառքերը կը վերցնէր... ութ հիւանդատու կառքեր քանդուած են: Մշակուած տան մէջ, ուր փոխադրուեցան հայերը, որոնց ապահովութիւնը վտանգուած էր, հարկ էր նուազագոյն պայմաններ ստեղծել: Հոն բերուած էր ինչ որ կարելի էր հիւանդանոցէն՝ վերձակ, բարձ, և լայն: Առաւօտեան 3ին, պարտաւորուած էինք կոտորել նպարեղէնի խանութի մը դուռը, երախաներուն համար ուտելիք առնելու: Չեմ մոռնար, այդ դիչերը, մանուկներուն ճաշը պատրաստեց կամա Սարգսեան, գիտնալով հանդերձ որ ամուսինը սպաննուած էր փոկրոմները կազմակերպողներուն կողմէ: Այդ դիչեր 81 վիրաւոր ունեցանք: 16ը՝ դեռ կը խնամուին Պաքու»:

Դատախազ կայրով կ'ըսէ. «Չեմ կրնար հաւատալ որ այս ոմրագործ վայրի կենդանիները ատրպէյճանցի մօրմէ ծնած են»: Ինչպէ՞ս պատահեցան այս ոմիրները: Ըստ քաղաքին կուսակցու-

կան քարտուղարին, հարկ եղած ուշադրութիւնը չեն շարժուցած Ղափանէն հասնող ատրպէյճանցիներուն:

Այլ մանրամասնութիւններէ ետք, թղթակիցը որպէս վերջարան կը զբէ թէ այս առաջինները, որոնք մոռցած են այս սարսափելի դէպքերը, եղած են հայուհի թամարա Աւագեանը եւ ատրպէյճանցի՝ Իկոր Մամեդով, որ ամուսնացեր են, Սոււմլայիթ, Մարտ Տին...:

Այս վերջին «փաստը», բացի թեթեւամիտ ըլլալէ, անշուշտ որ չի համապատասխաներ իրականութեան, քանի որ հայ ժողովուրդը ամէնուր հետզհետէ աւելի՛ ուժղին կը յիշէ, եւ կը պահանջէ ոմրագործներուն պատիժը:

## ՔԱՆԱՏԱՅԻ ՎԱՐՉԱՊԵՏ ՄԸԼՐՈՒՆԻ Հ Ե Ռ Ա Գ Ի Ր Ը

Քանատայի վարչապետ՝ Պր. Պրայրն Մըլլունի հետեւեալ հեռագիրը ուղղած է քանատահայ համայնքին, Մեծ Կղևանի 73-րդ տարեդարձին առթիւ:

«Քանատայի հայ համայնքին համար սուգի օշ մըն է այսօր, երբ կը հաւաքուինք հրապարակաւ եւ անհատապէս՝ յիշատակելու 1915ի դէպքերը եւ այդքան անմեղներու սարսափելի մահերը:

Իբրեւ քանատացիներ կը վշտակցինք անոնց հետ, որոնք տառապած են զինեալ բախումներու հետեւանքով: Կը հասկնաս հայ համայնքին փափաքը, իր անցեալը յիշելու եւ իր գաւակներուն իրազեկ դարձնելու իր պատմութեամբ: Այսօր, երբ կը յիշատակէք 73 տարի առաջ պատահած սրբաբախական դէպքերը, Քանատայի ժողովուրդին համակրանքը ձեզի հետ է»:

ՊՐԱՅԸՆ ՄԸԼՐՈՒՆԻ

Վարչապետ

Ծ. Խ. — Ինչպէս նկատելի է, Քանատայի վարչապետը ոչ միայն խուսափած է գործածելու ցեղասպանութիւն բառը, այլ ան կը «վշտակցի դանազան բախումներու հետեւանքով» տառապողներուն...: